Արձանագրություն N 3

«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/184» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի եղանակով ԵՊՀ Գրադարանի կարիքների համար տպագրական ապրանքների և մարտկոցների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 05.09.2024թ.

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Եզնիկ Միրզոյան՝ (Գնահատող հանձնաժողովի նախագահ),

հանձնաժողովի անդամներ՝

Աիդա Սարգսյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),

Հարություն Աբգարյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),

հանձնաժողովի քարտուղար՝

Լուսինե Այվազյան՝ (Գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1. **Էլեկտրոնային աճուրդի եղանակով գնման ընթացակարգի շրջանակներում հրավերի պարզաբանման տեքստը հաստատելու մասին**

1.2 Հիմք ընդունելով **05.09.2024թ. ստացված հարցադրումը** հրավերի վերաբերյալ և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց՝

- Հաստատել հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը և հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում

Հարցադրում N 2 (05.09.2024թ.) «Բարև Ձեզ, տվյալ դեպքում հարցը վերաբերվում է ոչ թե համարժեքության գնահատմանը՝ այսինքն, մենք ոչ թե հարցնում ենք օրինակ՝ գնահատեք TOTAL ֆիրմայի մարտկոցը համարժեք է, թե ոչ Duracel-ին, այլ հստակ ասում ենք, որ TOTAL ֆիրմայի մարտկոցների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներով սահմանված մարտկոցների տեխնիկական բնութագրերին, հետևաբար Ձեր կողմից բերված հիմնավորումը չի վերաբերվում տվյալ դեպքին, ինչով պայմանավորված ևս մեկ անգամ խնդրում ենք հրավերում փոփոխություն կատարել, քանի որ հակառակ դեպքում սահմանափակում է մեր մասնակցությունը, ինչը հակասում է Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին»:

Պարզաբանում N 2 (05.09.2024թ.) «Հարգելի՛ գործընկեր, տեղեկացնում ենք Ձեզ, որ գնման առարկաների տեխնիկական բնութագրերին վերաբերող կարգավորումները չեն սահմանափակվում միայն «Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի դրույթներով: Խնդրում ենք ուշադրություն դարձնել նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետին, որի համաձայն «գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով և նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված՝ պատվիրատուի ղեկավարի հետ համաձայնեցված դեպքերում կատարվող գնումների: Ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը»: Այս դեպքում գնման առարկայի տեխնիկական բնութագրում նշվել են գնման առարկաների մեկից ավելի հղումներ, որոնք պատվիրատուի կարիքը բավարարելու նպատակով կարող են առաջարկվել: Նշված պրակտիկան պատվրատուների կողմից ներկայումս լայնորեն կիրառվում է: Նմանատիպ հարցերի դեպքում խնդրում ենք դիմել պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության բարեբախտությունը մշակող և իրականացնող գործարար հիշանության պետական մարմին՝

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. **Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունը.**

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել էլեկտրոնային աճուրդի ավարտից հետո:

Հանձնաժողովի Նախագահ՝	Եզնիկ Միրզոյան	ստորագրություն
Անդամներ՝	Աիդա Սարգսյան	ստորագրություն
	Հարություն Աբգարյան	ստորագրություն
Քարտուղար՝	Լուսինե Այվազյան	ստորագրություն